



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Ե 40/11 - 6062
«14» 12 2017 թ.

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, (+374 60) 37 26 56
Ֆաքս (374 10) 44-29-04

<<ԷԴԵԼ>> ՍՊ ընկերության
տնօրեն Ս. Վարդազարյանին
ք. Երևան, Շիրակի 45/2
Էլեկտրոնային հասցեն edel.sp@mail.ru

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

(ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության և
<<Էդել>> ՍՊ ընկերության միջև 22.03.2017թ. կնքված պետության կարիքների համար
սննդամթերքի մատակարարման պետական գնման թիվ ՀՀԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/2-ՔԿՎ(17)-
1/2>> պայմանագիրն ու դրա հիման վրա 07.09.2017թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը
չկատարված մասով միակողմանի լուծելու մասին)

Հարգելի պարոն Վարդազարյան

Պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պետական գնման
թիվ ՀՀԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/2-ՔԿՎ(17)-1/2>> ծածկագրով պայմանագրի և դրա
անբաժանելի մաս կազմող 07.09.2017թ. կնքված N1 համաձայնագրի համաձայն՝ Ձեր
ընկերությունը պարտավոր էր ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության 2017թ.
ընթացքում մատակարարել՝ ոլոռ-15000կգ, ցորենաձավար-25000կգ, հավկիթ(ծու)-
220000հատ, միս տավարի տեղական(ոսկրոտ)-19000կգ, մսի պահածո-60000կգ՝
123152000(հարյուր քսաներեք միլիոն հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր
գումարով, սակայն 14.11.2017թ. դրությամբ Ձեր կողմից մատակարարվել է ոլոռ 12250կգ,
ցորենաձավար-15300կգ, հավկիթ(ծու)-103820հատ, միս տավարի տեղական(ոսկրոտ)-
9536.5կգ, մսի պահածո-37242.4կգ քանակությամբ: Այսինքն, Ձեր ընկերության կողմից
պայմանագրային պարտավորությունները պատշաճ և ժամանակին չեն կատարվել:
Ապրանքները ընդունվում են հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

Ձեր ընկերության կողմից 04.10.2017թ. Ա սերիայի 6417615297 հարկային հաշվով <<Նուբարաշեն>> քրեակատարողական հիմնարկ մատակարարված 2314.4կգ մսի պահածո ապրանքատեսակից, <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՎ(17)-1/2>> ծածկագրով կնքված պայմանագրի համաձայն՝ նմուշառումներ են կատարվել ՀՀ ԳՆ ՍԱՊԾ <<ՀԱԲԼԾԿ>> ՊՈԱԿ-ի կողմից և վերջինիս կողմից տրված փորձաքննության արդյունքներով հիմնավորվել է, որ նմուշառված մսի պահածոն չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, այսինքն մատակարարված է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք: Արդյունքում, տվյալ խմբաքանակից 1953.374կգ փաստացի չի ընդունվել, առանձնացված է այն և գտնվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պահեստում՝ պատշաճ պահպանության ներքո:

Ձեր իսկ պահանջով՝ 30.11.2017թ. թիվ 40/11-5826 գրությամբ՝ առաջարկվել էր երրորդ անկախ փորձագիտական կազմակերպությունից, նույնպես ներկայացնել տվյալ ապրանքատեսակի փորձաքննության արձանագրություն:

Նմուշառման արդյունքում՝ փորձաքննության արդյունքներով ստացվել են <<Մավաս գրուպ>> ՍՊ ընկերության, ինչպես նաև <<Տոնուս-Լես>> ՍՊ ընկերության <<ԷՖ 'Ի' ԷՅ Լաբ>> փորձարկման լաբորատորային փորձաքննության պատասխանները:

Վերջինիս կողմից տրված փորձարկման հաշվետվության համաձայն, նմուշառված <<տավարի մսի պահածո>> ապրանքատեսակը չի համապատասխանում կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ ճարպի զանգվածային մասի ցուցանիշներով: Այսինքն ևս մեկ հիմնավորում, որ մատակարարված <<մսի պահածո>> ապրանքատեսակը պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին չի համապատասխանում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ՀՀ ԱՆ ՔԿ վարչությունը պայմանագրի 3.1.7., 3.1.7.1. և 9.8 կետերի հիմքով՝ 22.03.2017թ. կնքված <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՎ(17)-1/2>> ծածկագրով պայմանագիրը և դրա անբաժանելի մաս կազմող 07.09.2017թ. կնքված N1 համաձայնագիրը չկատարված մասով միակողմանի մասնակի լուծում է:

Տեղեկացնում եմ, որ <<Էդել>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու համար պայմանագրի 7.4 կետով սահմանված տուգանքը: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ <<Էդել>> ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը):

Հարգանքով՝

Պետի տեղակալ
ադդ. գնդապետ



Վ. Մելքոնյան